Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 11-03-2022 թ. որոշմամբ
««ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ 53 -
1.3 Պետական գրանցման համարը	222.160.979426
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2017-10-23
1.5 ՀՎՀՀ-ն	01503576
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10513003
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://matenadaran.am/
1.8 Էլեկտրոնային փոստը	contact@matenadaran.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
Հայաստանի Հանրապետություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	

Վահրամ Դումանյան		
Արայիկ Խզմալյան		
Արայիկ Հարությունյան		
Համլետ Գասպարյան		
Սարգիս Հայոցյան		
Աննա Չուլյան		
Պավել Ավետիսյան		
Տեր Ասողիկ Քահանա Կարապետյան		
Դավիթ Հովհաննիսյան		
Գաբրիել Ջամբարջի		
Լևոն Աբրահամյան		
Կլոդ Մութաֆյան		
Արմեն Մկրտչյան		
Նվարդ Փիլթակյան		
Աիդա Չարխչյան		
Գայանե Էլիազյան		
Արմեն Մալխասյան		
Անահիտ Նշանյան		
Վարդանուշ Փոստաջյան		
Հրավարդ Հակոբյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Վահան Տեր Ղևոնդյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	313	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցություն	632,808,600
	«Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մեծադիր ձեռագրերի(Հայսմավուրքներ,Ճառ ընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայման ու գիտատեխնիկական մշակման» ծրագրի իրականացում	21,600,000
	Գիտական կադրերի պատրաստման նպաստ	1,319,300
	Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակ	3,510,000
	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ	22,600,000
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	20,300,200

8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառ. Կենտրոնի և Նորք - Մարաշ տարածքային կենտրոն-	404,700
	Հորիզոն 2020	6,236,876
	Նվիրաբերություն ՀԲԸՄ (ասպիրանտական կրթաթոշակ)	3,600,000
	Նվիրաբերություն Ռենշին ՍՊԸ (սերվերային համակարգի բարելավում և համալրում))	2,000,000
	Նվիրաբարություն Գյուլբենկյան հիմնադրամ «Մատենագիրք հայոց» 22-րդ հատորի մատենաշարի հրատարակություն	8,510,500
	Նվիրաբերություն Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ գրքի հրատարակություն	480,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրաբերություն Նշան Մարկ Օղաբաշյան	258,400
	Ձեռնարկատիրական գործունեություն	81,444,500
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Գիտական և գիտատեխնիկական գործունեության Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցություն	632,808,600	
«Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մեծադիր ձեռագրերի(Հայսմավուրքներ,Ճառ ընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայման ու գիտատեխնիկական մշակման» ծրագրի իրականացում	21,600,000	
Գիտական կադրերի պատրաստման նպաստ	1,319,300	

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակ	3,510,000
Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ	22,600,000
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	17,522,700
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառ. Կենտրոնի և Նորք - Մարաշ տարածքային կենտրոն-	404,700
Հորիզոն 2020	6,236,876
Նվիրաբերություն ՀԲԸՄ (ասպիրանտական կրթաթոշակ)	3,600,000
Նվիրաբերություն Ռենշին ՄՊԸ (սերվերային համակարգի բարելավում և համալրում))	1,784,400
Նվիրաբարություն Գյուլբենկյան հիմնադրամ «Մատենագիրք հայոց» 22-րդ հատորի մատենաշարի հրատարակություն	5,598,000
Նվիրաբերություն Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ գրքի հրատարակություն	480,000
Նվիրաբերություն Նշան Մարկ Օդաբաշյան (հանրային կապերի բաժնի կարիքների համար)	258,400
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	778,189,976
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	717,722,976

Նշումներ՝

Հիմնադրամն իրականացնում է նաև ձեռնարկատիրական գործունեություն:Հաշվետվության 12-րդ և 13-րդ կետերի միջև եղած 60,467,000 ՀՀ դրամի չափով ծախսերի տարբերությունը կապված է ձեռնարկատիրական գործունեության հետ (ինքնարժեք և այլն):

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___8___ թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 1st floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 1-ին հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Crowe

որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատության վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալմեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
Առաջադրանքի պատասխանատու

22 հունիսի 2022թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Լ. Աբրահամյան
Խորհրդի նախագահ

Ա. Հարությունյան
Խորհրդի անդամ - ՀՀ կրթության և գիտության նախարար

Վ. Բուդումյան
Խորհրդի անդամ - ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ

Է. Աղաջանյան
Խորհրդի անդամ - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

Հ. Գասպարյան
Խորհրդի անդամ - ՀՀ նախագահի խորհրդական

Ս. Հարությունյան
Խորհրդի անդամ - ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

Տ. Զարգարյան
Խորհրդի անդամ - «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն

Պ. Ավետիսյան
Խորհրդի անդամ - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Տ. Ասողիկ քահանա Կարապետյան
Խորհրդի անդամ - Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Կաթողիկոսարանի արխիվի և թանգարանների տնօրեն

Դ. Հովհաննիսյան
Խորհրդի անդամ - Երևանի պետական համալսարանի քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի տնօրեն

Գ. Ջամբարջի
Խորհրդի անդամ - «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամի խորհրդի նախագահ

Կ. Մութաֆյան
Խորհրդի անդամ - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ

Ա. Մկրտչյան
Խորհրդի անդամ -
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի տնտեսական գծով տեղակալ

Ն. Փիլթակյան
Խորհրդի անդամ -«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի

գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր հաշվապահ

Ա. Չարխչյան
Խորհրդի անդամ -«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի ցուցասրահների վարիչ

Գ. Էլիազյան
Խորհրդի անդամ -«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի վերականգնման բաժնի վարիչ

Ա. Մալխասյան
Խորհրդի անդամ -«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի արխիվային փաստաթղթերի պահպանման և գիտական մշակման բաժնի վարիչ

Ա. Նշանյան
Խորհրդի անդամ -«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի կադրերի բաժնի վարիչ

Վ. Փոստանջյան
Խորհրդի անդամ - Մատենադարան Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի կադրերի բաժնի վարիչ

Գ. Բրուտյան
Խորհրդի անդամ - «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի բժշկագիտության և բնատգիտության բաժնի ավագ գիտաշխատող

Հ. Հակոբյան
Խորհրդի անդամ - «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի ավագ գիտաշխատող

Խ. Հարությունյան
Խորհրդի անդամ – «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի միջնադարյան հայ գրականության ուսումնասիրման և ձեռագրագիտության և մայր ցուցակի բաժինների ավագ գիտաշխատող

Ն. Ղարիբյան
Խորհրդի անդամ - «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի ավագ գիտաշխատող

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	4	650,030	588,236
Հետաձգված եկամուտ	5	18,676	65,814
Վաճառված ապրանքների և մատուցված ծառայությունների ինքնարժեք	6	(7,098)	(785)
Համախառն շահույթ		661,608	653,264
Աշխատակիցներին հատուցումներ		(556,490)	(520,094)
Մաշվածություն և ամորտիզացիա	9	(54,916)	(60,147)
Գրասենյակային ծախսեր		(59,378)	(44,387)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(583)	-
Գործուղման ծախսեր		(3,503)	(461)
Բանկային ծառայության ծախսեր,ապահովության ծախսեր		(594)	(360)
Պահուստներ		(8,356)	(157,445)
		(22,214)	(129,630)
Այլ ծախսեր		(33,965)	(87,382)
Գործառնական գործունեությունից արդյունք		(56,179)	(217,013)
Ֆինանսական եկամուտ		1,633	1,627
Այլ ֆինանսական հոդվածներ	7	853	-
Արդյունք մինչև հարկումը		(53,693)	(215,386)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	8	(3,988)	28,287
Տարվա արդյունք		(57,681)	(187,099)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(57,681)	(187,099)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ.-ի հունիսի 22-ին՝

Վահան Տեր-Ղևոնդյան
Տնօրեն

Նվարդ Փիլթակյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	161,456	213,201
Ոչ նյութական ակտիվներ	9	428	999
Հետաձգված հարկային ակտիվներ	10	28,476	28,287
		190,360	242,487
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	16,066	19,388
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	2,935	15,852
Դրամական միջոցներ և համարժեքներ	13	63,836	36,933
		82,837	72,173
Ընդամենը ակտիվներ		273,197	314,660
Զուտ ակտիվներ		(116,801)	(59,120)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	14	187,253	185,451
		187,253	185,451
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	38,617	31,180
Հետաձգված եկամուտ	14	14,027	-
Պահուստներ	16	150,101	157,148
		202,745	188,328
Ընդամենը պարտավորություններ		389,998	373,779
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		273,197	314,659

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(57,681)	(187,099)
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	3,988	28,287
Մաշվածություն և ամորտիզացիա	54,916	60,147
Պահուստներում փոփոխություն	(7,047)	(80,743)
Ֆինանսական եկամուտ	(1,633)	(1,627)
Շնորհներից եկամուտ	(11,437)	(65,814)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	31	-
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(18,863)	(246,849)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	12,917	(5,400)
Պաշարների փոփոխություն	3,324	(733)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	9,938	(17,186)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	7,321	(270,168)
Վճարված շահութահարկ	(1,100)	(3,488)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	6,215	(273,655)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,601)	(51,386)
Ստացված տոկոսներ	1,633	1,627
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(967)	(49,759)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից մուտքեր	21,657	286,752
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	21,657	286,752
Դրամական միջոցների և համարժեքների զուտ աճ/(նվազում)	26,904	(36,662)
Դրամական միջոցների և համարժեքները տարեսկզբի դրությամբ	36,932	73,595
Դրամական միջոցների և համարժեքներ տարեվերջի դրությամբ	63,836	36,933

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.08.2022 11:55